ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
16.12.2013թ. ԹԻՎ 15 ՈՐՈՇՈՒՄ.

հեռ.0234 6 12 03

*2013թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին (զեկուցող՝ Մ. Սանթոյան)*

*Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների՝*

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

*1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանավում է հիմնական օբյեկտների համար՝*

*ա) Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ;*

*բ) Սույն կետի »ա « ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝*

*բ ա) 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 5000 դրամ:*

բբ)501 –ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 5000դրամ:

բգ) 1001- ից ավելի քառակուսի -մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 10000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

դ) 20 և ավելի քառակուսի – մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրքը սահմնվում է 5000դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմնվում է՝

ա) Ոգելից խմիչքների վաճառքի թույտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում թույտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար 1300 դրամ:

բ) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

5. Համայնքի արխիվից պաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000դրամ;

6. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայությունն իրականացնելու թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ

Օրենքի 10 հոդվածի 1, 2, 3 կետերով սահմանված դրույքաչափերը համայնքում հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

## Տեղական վճարներ

Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության
ավարտը փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանվում է 1000 դրամ:

Աղբահանության վճարի դրույքաչափը սահմանել համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր 1 անձի համար ամսական 150 .0դրամ

Մ. Նաջարյան

Հ. Քիշմիրյան

Ս.Հարությունյան

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
16,12.2013թ. ԹԻՎ 16 ՈՐՈՇՈՒՄ.

հեռ.0234 6 12 03

*Համայնքի ղեկավարի դրույքաչափը հաստատելու մասին ( ղեկ. Մ. Վ. Սանթոյան)*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի՝*

# ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

*Հաստատել համայնքի ղեկավարի դրույքաչափը* 140000*դրամ.*

Մ. Նաջարյան

Հ. Քիշմիրյան

Ս. Հարությունյան

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
16.12.2013թ. ԹԻՎ 17 ՈՐՈՇՈՒՄ.

հեռ.0234 6 12 03

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և դրույքաչափերը հաստատելու մասին

(Զեկ. Մ. Սանթոյան)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի՝

# ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և դրույքաչափերը հետևյալ կերպ.

| | | |
|---|---|---|
| 1. քարտուղար | 1 | 110000 |
| 2. հաշվապահ | 1 | 109000 |
| 4. հարկահավաք | 1 | 60000 |
| 5.համակարգչային օպերատոր | 1 | 60000 |
| 6. գրադարանավարուհի | 1 | 60000 |
| 7. հավաքարար | 1 | 60000 |

Մ. Նաջարյան Կող

Հ. Քիշմիրյան Կողմ

Ս. Հարությունյան Կողմ

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԻՆԵՎԵՏ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**16.12.2013թ. ԹԻՎ 18 ՈՐՈՇՈՒՄ.**

*հեռ.0234 6 12 03*

*2014թ-ի բյուջեի նախագծի հաստատման մասին*

*(զեկ Մ. Վ. Սանթոյան)*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի*

# ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇԵՑ

*Հաստատել Գինեվետ համայնքի 2014թ-ի բյուջեի նախագիծը՝*

*Ընդամենը բյուջեն -13919.2*

*եկամուտների գծով՝*

*հարկեր և տուրքեր – 2522.4*

*այդ թվում՝ 1. գույքահարկ շենք և շինություններից՝ --1200.0*

*ֆիզ. անձանցից –20.0*

*իրավաբանական անձանցից—1180.0*

*2. հողի հարկ—720.0*

*ֆիզ.անձ.—660.0*

*իրավաբանական անձ.-60.0*

*3.գույքահարկ փոխադրամիջոցներից—580.0*

*4.տեղական տուրք, --22.4*

*5.դոտացիա -10554.8*

*6,Աղբահանություն –600.0*

*Այլ եկամուտներ՝242.0*

*1.հողի վարձավճար—230.0*

*2. գույքի վարձակալություն—12.0*

Ծախսերի գծով—13919.2

*այդ թվում՝ 1.կառավարման ապարատ—9788.0*

*2.կոմունալ ծառ. –400.0*

*3.փողոցների լուսավորում—300.0*

*4.ընդ. բնույթի հանր. ծառ. ---50.0*

*5.պահուստային ֆոնդ--781.0*

*6.այլ մշ. ծախսեր-600.0*

*7.աղբահանություն —600.0*

*8.այլ սոց.պաշտ.—1400.0*

Մ. Նաջարյան

Հ. Քիշմիրյան

Մ. Հարությունյան

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան